«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ ղեկավարության հայտարարագիրը կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության վերաբերյալ

«ՀԱԷԿ» ՓԲԸ ղեկավարությունը, գիտակցելով Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահպանման իր պատասխանատվությունը, հավատարիմ է ազնիվ, բարեխիղճ և բաց բիզնես վարելու բարձր չափանիշներին:

«ՀԱԷԿ» ՓԲԸ ղեկավարությունը հայտարարում է, որ իր գործունեության ընթացքում հավատարիմ է ցանկացած ձևով և դրսևորումներով արտահայտված կոռուպցիայի մերժման սկզբունքին և իր պարտքն է համարում աջակցել «ՀԱԷԿ» ՓԲԸ հակակոռուպցիոն մշակույթի մակարդակի բարձրացմանը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ ղեկավարությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նվազագույնի հասցնելու գործարար հարաբերությունների ռիսկը այն անհատների և ընկերությունների հետ, որոնք ներգրավված են եղել կամ կարող են ներգրավվել կոռուպցիոն գործունեության մեջ:

<u>«ՀԱԷԿ» ՓԲԸ կոռուպցիայի հակազդման հիմնական սկզբունքներն են՝</u>

- **Գործող օրենսդրությանը համապատասխանության սկզբունքը**
  «ՀԱԷԿ» ՓԲԸ իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և այլ նորմատիվ իրավական ակտերին:

- **Ղեկավարության անձնական օրինակի սկզբունքը**
  «ՀԱԷԿ» ՓԲԸ ղեկավարության առանցքային դերը կազմակերպությունում կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մշակույթի ձևավորման և կոռուպցիայի կանխարգելման ու դրա դեմ պայքարի համակարգի ստեղծման գործում:

- **Աշխատակիցների ներգրավվածության սկզբունքը**
  «ՀԱԷԿ» ՓԲԸ աշխատակիցների իրազեկվածությունը Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն օրենսդրության դրույթներին և նրանց ակտիվ մասնակցությունը ձեռնարկությունում կոռուպցիայի հակազդման միջոցառումների ձևավորմանը և իրականացմանը:

- **Հակակոռուպցիոն ընթացակարգերի համաչափության սկզբունքը կոռուպցիայի ռիսկի նկատմամբ**
  «ՀԱԷԿ» ՓԲԸ ղեկավարների և աշխատակիցների կոռուպցիոն գործունեության մեջ ներգրավման հավանականությունը նվազեցնելու նպատակով համալիր միջոցառումների մշակում և իրականացում՝ հաշվի առնելով առկա կոռուպցիոն ռիսկերը:

- **Հակակոռուպցիոն ընթացակարգերի արդյունավետության սկզբունքը**
  Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի տնտեսապես հիմնավորված միջոցառումների մշակում և իրականացում՝ իրականացման պարզություն ենթադրող և միևնույն ժամանակ կոռուպցիոն ռիսկերի իրականացման հնարավորությունը զգալիորեն նվազեցնող:

- **Պատասխանատվության և պատժի անխուսափելիության սկզբունքը**
  Անկախ զբաղեցրած պաշտոնից, աշխատանքային փորձից և այլ պայմաններից աշխատակիցների համար պատժի անխուսափելիությունը՝ աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների հետ կապված:

- **Բիզնեսի թափանցիկության սկզբունք**
  «ՀԱԷԿ» ՓԲԸ գործող հակակոռուպցիոն սկզբունքների վերաբերյալ իրազեկում գործընկերներին և հանրությանը:

- **Մշտական վերահսկողության և կանոնավոր մոնիթորինգի սկզբունքը**
  Ներդրված հակակոռուպցիոն սկզբունքների և ընթացակարգերի կատարման մշտական վերահսկողության և արդյունավետության պարբերական մոնիթորինգի իրականացում:

- **Պատշաճ խոհեմության սկզբունք**
  «ՀԱԷԿ» ՓԲԸ աշխատանքի ընդունվելիս թեկնածուների ստուգման իրականացում՝ նրանց վստահելիության, կոռուպցիայի անհանդուրժողականության և շահերի բախման բացակայության հետ:

- **Պաշտպանվածության երաշխիք**
  Կոռուպցիոն խախտումների վերաբերյալ ստացված տեղեկատվության անանունության և գաղտնիության ապահովում «ՀԱԷԿ» ՓԲԸ արտադրական գործունեության ընթացքում:

«ՀԱԷԿ» ՓԲԸ բոլոր աշխատակիցները, անկախ իրենց պաշտոնից, կարգավիճակից և աշխատանքային փորձից, պետք է խստորեն պահպանեն հակակոռուպցիոն քաղաքականության սկզբունքները և պահանջները՝ ուղված կոռուպցիայի հակազդմանը և կոռուպցիոն ռիսկի նվազեցմանը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ իր գործընկերներից է նաև ակնկալում կոռուպցիայի հակազդման սկզբունքների պահպանում:

«ՀԱԷԿ» ՓԲԸ ղեկավարությունը ակնկալում է կազմակերպության և կապալառուների աշխատակիցների կողմից հաղորդում ցանկացած ենթադրյալ կամ իրական կոռուպցիայի փաստի վերաբերյալ, ինչպես նաև ցանկացած գործողությունների (անգործության) մասին, որոնք կարող են հանգեցնել կամ հանգեցրել են Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն օրենսդրության խախտման: «ՀԱԷԿ» ՓԲԸ ղեկավարությունը երաշխավորում է անանունության և գաղտնիության սկզբունքների պահպանումը՝ հաղորդում ներկայացնողի և ստացված հաղորդումների վերաբերյալ:

Կոռուպցիայի դեմ պայքարի որդեգրած քաղաքականության հետևողական իրականացումը կբարձրացնի Հայկական ԱԷԿ-ի շահագործման անվտանգությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև հանրության վստահությունը ատոմային էներգետիկայի նկատմամբ: